Ս.Ա.Գասպարյան

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.46
«ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/20»

ք. Երևան «12» 06 2020 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<Վարմէքս>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Մ.Խաչատրյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 10250128 (տասը միլիոն երկու հարյուր հիսուն հազար հարյուր քսաներութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում (տե՛ս հավելված 1.1) ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝

պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով [1]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել

---

[1] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Գնորդ»	«Վաճառող»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ	« Վարմէքս» ՍՊԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ	ք. Երևան, Տիգրան Մեծի 46/4
Ի.Գասպարյան 33	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	Հ/Հ 2050022329031001
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ձ	ՀՎՀՀ 00407187
ՀՎՀՀ 01216144	
Գլխավոր տնօրեն _____Ա.Գասպարյան	Տնօրեն _____Մ.Խաչատրյան
ստորագրություն	ստորագրություն
	Կ.Տ

Հավելված N 1
«12» 06 2020 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/20 ծածկագրով 2.46 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի										
								մատակարարման		
ՉՀ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	վերջնաժամկետը
8	31442100/68	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 13Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	50000	400000	8	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	8	15.09.20
9	31442100/69	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 26Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	44100	88200	2	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	2	15.09.20
10	31442100/70	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց UPS-ի 12Վ 9Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	7798	280728	36	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	36	15.09.20
11	31442100/71	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 6Վ 4Աժ	տե՛ս հ2260 ավելված 1.1	հատ	3900	85800	22	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	22	15.09.20
12	31442100/72	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 7Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	6300	743400	118	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	118	15.09.20
13	31442100/73	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 12Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	11700	538200	46	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	46	15.09.20
14	31442100/74	Կուտակիչ մարտկոցներ՝ UP-RW0645NA1 մոդելի մարտկոց	տե՛ս հավելված 1.1	հատ	7600	456000	60	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	60	15.09.20
15	31442100/75	Կուտակիչ մարտկոցներ՝ SHR1227W 27WPC մոդելի մարտկոց	տե՛ս հավելված 1.1	հատ	12600	403200	32	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	32	15.09.20
16	31442100/76	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 190Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	88200	176400	2	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	2	15.09.20
17	31442100/77	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 60Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	134000	6432000	48	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	48	15.09.20

18	31442100/78	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 90Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	42000	252000	6	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	6	15.09.20
19	31442100/79	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 60Աժ	տե՛ս հավելված 1.1	հատ	35100	70200	2	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	2	15.09.20
20	31442100/80	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց	տե՛ս հավելված 1.1	հատ	18000	324000	18	ք.Երևան-0042, Ի.Գասպարյան-33, «Հայէրոնավիգացիա» ՓԲԸ	18	15.09.20

*** 17-րդ և 20-րդ չափաբաժիններով Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքի համապատասխանության վկայագիրը:*

Բոլոր չափաբաժինների համար՝ որտեղ առկա են արտադրության, պիտանելիության, ծառայության, շահագործման կամ/և նմանատիպ ժամկետներ և դրանք դաջված չեն ապրանքի վրա կամ նշված չեն ապրանքի գործարանային պիտակի վրա, կամ կողավորված են արտադրողի կողմից, պայմանագրի կատարման/մատակարարման/ փուլում վերը շարադրված ժամկետների մասին ներկայացնել փաստաթղթավորված և ապակողավորված տվյալ ապրանքի կամ ապրանքախմբի համար:

«Գնորդ»

<<Հայէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ Ա.Գասպարյան
ստորագրություն

«Վաճառող»

« Վարմէքս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 46/4
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022329031001
ՀՎՀՀ 00407187

Տնօրեն _____ Մ.Խաչատրյան
ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 1.1
«12» 06 2020 թ. կնքված
ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/20 ծածկագրով պայմանագրի
2-46

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Չափման միավոր	ՔԱՆԿԸ	Բնութագիր
8	31442100/68	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 13Աժ	հատ	8	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց Varta նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար: Պատրաստված է AGM տեխնոլոգիայով: Ծառայության ժամկետը 7 տարի: Լարումը - 12Վ Ունակությունը - 13Աժ Բևեռային սեղմակները - M6 պտուտակային միացում: Չափերը - 150x87x146մմ : Նշված բարձրությունը պետք է լինի սեղմակների հետ միասին: Արտադրման տարեթիվը - 2020թ: Երաշխիքը - 1 տարի Փաթեթավորումը - գործարանային:
9	31442100/69	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 26Աժ	հատ	2	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար՝ DELTA Պատրաստված է AGM տեխնոլոգիայով: Մարտկոցների ծառայության ժամկետը **պետք է** լինի ոչ պակաս քան 7 տարի: Լարումը - 12 Վ: Ունակությունը - 26 Աժ: Բևեռային սեղմակները - M6 պտուտակային միացում: Չափերը - 165x180x127մմ: Նշված բարձրությունը **պետք է** լինի սեղմակների հետ միասին Երաշխիքը - 1 տարի Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
10	31442100/70	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց UPS-ի 12Վ 9Աժ	հատ	36	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար՝ Vision Լարումը - 12Վ Ունակությունը - 9Աժ Չափերը - 151x65x94մմ Ֆաստոն սեղմակով: Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
11	31442100/71	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 6Վ 4Աժ	հատ	22	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար՝ DELTA: Լարումը - 6Վ Ունակությունը – 4,5 Աժ

					Չափսերը - 70x47x101մմ Ֆաստոն սեղմակով: Շահագործման ժամկետը - 3 տարի Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
12	31442100/72	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 7Աժ	հատ	118	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար՝ Vision: Լարումը - 12Վ Ունակությունը - 7Աժ Չափերը - 151x65x94մմ Ֆաստոն սեղմակով: Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
13	31442100/73	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 12Աժ	հատ	46	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար՝ Index Լարումը - 12Վ Ունակությունը - 12Աժ Չափերը - 151x98x94մմ Ֆաստոն սեղմակով: Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
14	31442100/74	Կուտակիչ մարտկոցներ՝ UP-RW0645NA1 մոդելի մարտկոց	հատ	60	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց DELTA նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար: Մոդելը - DELTA DTM607 Չափերը - 151x34x94մմ (L:W:H): Արտադրման տարեթիվը - 2020թ: Երաշխիքը - 1 տարի: Փաթեթավորումը - գործարանային:
15	31442100/75	Կուտակիչ մարտկոցներ՝ SHR1227W 27WPC մոդելի մարտկոց	հատ	32	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց DELTA նախատեսված անխափան սնուցման աղբյուրի համար: Մոդելը - DELTA DTM1205 Չափերը - 90x70x101մմ (L:W:H): Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
16	31442100/76	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 190Աժ	հատ	2	Կապարաթթվային մարտկոց նախատեսված դիզ. գեներատորի համար՝Varta: Լարում - 12Վ Ունակությունը - 190Աժ Թողարկային հոսանքը - 1200Ա Չափերը - նվազագույնը 513x223x223 մմ Քաշը - նվազագույնը 45կգ Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:

17	31442100/77	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 60Աժ	հատ	48	DELTA 12-60 գելային ստացիոնար, կապարաթթվային, հերմետիկ, գերճնշման փականի կարգավորմամբ՝ չսպասարկվող մարտկոցներ՝ Մարտկոցների պատրաստման տեխնոլոգիան - dryfit (էլեկտրոլիտը դրանց մեջ խտացված է մինչև գելի վիճակի, չունի արտահոսք և չի պահանջում ջրի ավելացում): **Հիմնական տեխնիկական հատկանիշները՝** Լարումը - 12 Վ Ունակությունը - 60Աժ Չափերը - 228x139x217մմ-ից ոչ ավել (ԵxԼxԲ) Մարտկոցները պետք է ունենան զգալի ցիկլային ռեսուրս և լինեն կայուն խորը լիցքաթափման նկատմամբ: Շահագործման ռեժիմները՝ ա) մշտական վերալիցքավորման ռեժիմ, որի ժամանակ վթարային վիճակներում ապահովում է բեռի սնուցումը հաստատուն հոսանքով, բ) ցիկլային ռեժիմ՝ լիցքաթափման և լիցքավորման պրոցեսների հաջորդականությամբ: Մարտկոցները պետք է մատակարարվեն շահագործման համար ամբողջությամբ պատրաստ վիճակում՝ էլեկտրոլիտով լցավորված և լիցքավորված: Մոնտաժման պարագաները՝ մարտկոցների միջէլեմենտային միացուցիչները պետք է ներառված լինեն մատակարարվող լրակազմի մեջ՝ պատվիրված մարտկոցների քանակությանը համապատասխան: Ընդ որում մարտկոցներից 28-ը պետք է ունենան G-M6 տիպի սեղմակներ, իսկ մնացած 20 մարտկոցները՝ կոնաձև A տիպի սեղմակներ: Մարտկոցների ծառայության ժամկետը՝ ոչ պակաս, քան 7 տարի: Երաշխիքը 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2019-2020թ: Փաթեթավորումը - գործարանային: Մարտկոցները **պետք է** ունենան համապատասխանության վկայագիր:
18	31442100/78	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 90Աժ	հատ	6	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված դիզ. գեներատորի համար՝ Autopower: Լարում -12Վ, Ունակությունը - 95Աժ Թողարկային հոսանքը - 850-950Ա Առավելագույն չափերը՝ Երկարությունը - 290մմ Լայնությունը - 175մմ Բարձրությունը - 225մմ Քաշը - նվազագույնը 21 կգ Բևեռականությունը - 1 հատը՝ -/+, 5 հատը՝ +/-, Սեղմակները՝ ստանդարտ կոնուս EURO, Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2020թ: Փաթեթավորումը - գործարանային:
19	31442100/79	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 60Աժ	հատ	2	Չսպասարկվող հերմետիկ կապարա-թթվային մարտկոց նախատեսված դիզ. գեներատորի համար՝ Index: Լարում -12Վ, Ունակությունը - 65Ա/ժ, Թողարկային հոսանքը - 600-700Ա, Առավելագույն չափերը՝ Երկարությունը - 250մմ

					Լայնությունը - 175մմ Բարձրությունը - 225մմ Քաշը - նվազագույնը 15 կգ Բևեռականությունը՝ -/+ Սեղմակները՝ ստանդարտ կոնուս EURO, Երաշխիքը 1 տարի: Արտադրման տարեթիվը՝ 2020թ: Փաթեթավորումը՝ գործարանային:
20	31442100/80	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց	հատ	18	Հերմետիկ կապարաթթվային մարտկոց Index: Պատրաստված է AGM տեխնոլոգիայով: Հիմնական տեխնիկական հատկանիշները՝ Լիցքավորումը - ցիկլային մեթոդով Լարումը - 12Վ Ունակությունը - 9Աժ Չափերը - 64x94x151 մմ (ԼxԲxԵ) Ծառայության ժամկետը - ոչ պակաս 5 տարուց: Երաշխիքը - 1 տարի: Արտադրման տարեթիվը - 2019-2020թ: Փաթեթավորումը - գործարանային: Մարտկոցները պետք է ունենան համապատասխանության վկայագիր:

1. Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքների չօգտագործված լինելը:
2. 17-րդ և 20-րդ չափաբաժիններով Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքի համապատասխանության վկայագիրը:
3.Բոլոր չափաբաժինների համար՝ որտեղ առկա են արտադրության, պիտանելիության, ծառայության, շահագործման կամ/և նմանատիպ ժամկետներ և դրանք դաջված չեն ապրանքի վրա կամ նշված չեն ապրանքի գործարանային պիտակի վրա, կամ կողավորված են արտադրողի կողմից, պայմանագրի կատարման/մատակարարման/ փուլում վերը շարադրված ժամկետների մասին ներկայացնել փաստաթղթավորված և ապակողավորված տվյալ ապրանքի կամ ապրանքախմբի համար:

«Գնորդ»

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ձ
ՀԿՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____Ա.Գասպարյան
ստորագրություն

«Վաճառող»

« Վարմէքս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 46/4
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022329031001
ՀԿՀՀ 00407187

Տնօրեն _____Մ.Խաչատրյան
ստորագրություն
Կ.Տ

Հավելված N 2
2020 թ. կնքված
պայմանագրի

«12» 06 2.46

ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/20 ծածկագրով

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
ՉՀ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	Ընդամենը
8	31442100/68	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 13Աժ	400000	400000	400000	400000	400000	400000	400000	400000
9	31442100/69	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 26Աժ	88200	88200	88200	88200	88200	88200	88200	88200
10	31442100/70	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց UPS-ի 12Վ 9Աժ	280728	280728	280728	280728	280728	280728	280728	280728
11	31442100/71	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 6Վ 4Աժ	85800	85800	85800	85800	85800	85800	85800	85800
12	31442100/72	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 7Աժ	743400	743400	743400	743400	743400	743400	743400	743400
13	31442100/73	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 12Աժ	538200	538200	538200	538200	538200	538200	538200	538200
14	31442100/74	Կուտակիչ մարտկոցներ՝ UP-RW0645NA1 մոդելի մարտկոց	456000	456000	456000	456000	456000	456000	456000	456000

15	31442100/75	Կուտակիչ մարտկոցներ՝ SHR1227W 27WPC մոդելի մարտկոց	403200	403200	403200	403200	403200	403200	403200	403200
16	31442100/76	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 190Աժ	176400	176400	176400	176400	176400	176400	176400	176400
17	31442100/77	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց 12Վ 60Աժ	6432000	6432000	6432000	6432000	6432000	6432000	6432000	6432000
18	31442100/78	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 90Աժ	252000	252000	252000	252000	252000	252000	252000	252000
19	31442100/79	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց դիզ. գեներատորի 12Վ 60Աժ	70200	70200	70200	70200	70200	70200	70200	70200
20	31442100/80	Կուտակիչ մարտկոցներ՝ մարտկոց	324000	324000	324000	324000	324000	324000	324000	324000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

«Գնորդ»

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
ՀՀ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ Ա.Գասպարյան
ստորագրություն

«Վաճառող»

« Վարմէքս» ՍՊԸ
ք. Երևան, Տիգրան Մեծի 46/4
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022329031001
ՀՎՀՀ 00407187

Տնօրեն _____ Մ.Խաչատրյան
ստորագրություն
Կ.Տ.

Հավելված N 3
2020 թ. կնքված
պայմանագրի

« »
ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/20 ծածկագրով

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
2020 թ. կնքված
պայմանագրի

« »
ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/20 ծածկագրով

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն